ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ
(արտահերթ)

ք. Երևան **27.11.2019թ.**

Նիստին ներկա էին «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (Ինստիտուտ) հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 24–ը:

Մեկ անդամ նիստին մասնակցում էր հեռահար (Skype) կարգով:

Ապահովված էր նիստի քվորումը:

Նիստը վարում էր՝

Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյանը:

Նիստն արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Դիանա Ալեքսանյանը:

Օրակարգ

1. Ինստիտուտի նոր կառուցվածքի քննարկում և հաստատում:
2. Ինստիտուտի վարչական աշխատակազմի հաստիքացուցակի քննարկում և հաստատում:
3. Ինստիտուտի կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծի քննարկում և հաստատում:
4. Ինստիտուտի Հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծի քննարկում և հաստատում:
5. Ինստիտուտի ռեկտորի ընտրության կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծի քննարկում և հաստատում:
6. Այլ հարցեր:

Օրակարգի առաջին հարցով (զեկուցող Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան) Ելույթ ունեցավ ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը, ներկայացրեց նոր կառուցվածք ունենալու անհրաժեշտությունը, քանի որ նոր կառուցվածք ունենալը բխում է ինչպես արդյունավետ

կառավարման հիմունքներից, տրամաբանական հարաբերություններից, այնպես էլ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունների բնույթից:

Անդամները ներկայացրած կառուցվածքի վերաբերյալ հայտնեցին իրենց մտահոգությունները, դիտողությունները, ներկայացրեցին և առաջարկեցին կառուցվածքը քննարկել ևս մեկ անգամ, առավել հստակ հասկանալու և պատկերացնելու Ինստիտուտի գործունեությունը նման կառուցվածքով: Նման առաջարկով հանդես եկավ Խորհրդի անդամ Գևորգ Լոռեցյանը:

Առաջարկվեց՝

1. Խորհրդի անդամ Էդգար Ալեքսանյանը ևս առաջարկեց առաջին հերթին հաստատել օրակարգը, այնուհետև առաջարկեց կոնսենսուսային լուծում գտնել և հետաձգել մեկ շաբաթով նոր կառուցվածքի հաստատումը և ոչ ֆորմալ նիստի միջոցով ևս մեկ անգամ քննարկել կառուցվածքը:
2. Խորհրդի անդամ Էռնեստ Ավանեսովը առաջարկեց օրակարգից հանել առաջին հարցը:
3. Այնուհետև Խորհուրդը եկավ համաձայնության հանել օրակարգից առաջին և երկրորդ հարցերը, քանի որ երկրորդ հարցը բխում էր կառուցվածքից, ինչպես նաև նշանակեցին ս.թ նոյեմբերի 30–ը, ժամը 12:00-ն առաջին և երկրորդ հարցերը քննարկելու համար:
4. Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանն առաջարկեց նաև կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների վերաբերյալ ներկայացնել ամփոփ տեղեկագիր:
5. Առաջարկվեց Օրակարգի հարցերի համարակալումն անել առանց առաջին երկու հարցերի:

Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)

Օրակարգի երկրորդ հարցը նույնպես Խորհրդի համաձայնությամբ հանվեց օրակարգից, քանի որ առաջին հարցի հետ անմիջականորեն կապված է և բխում է վերջինից:

Օրակարգի առաջին և երկրորդ հարցերը օրակարգից հանելու հարցը և նոր համարակալմամբ օրակարգը դրվեց քվերակության: Կողմ քվեարկեց Խորհրդի անդամներից 13–ը: Հարցն ընդունվեց:

Օրակարգի առաջին հարցով (զեկուցող Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան, հարակից զեկուցող Ինստիտուտի իրավախորհրդատու Օֆելյա Պետրոսյան)

Առաջին հարցի ներկայացման համար Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը խոսքը փոխանցեց Ինստիտուտի իրավախորհրդատու Օ. Պետրոսյանին:

Ինստիտուտի իրավախորհրդատու Օ. Պետրոսյանը ներկայացրեց Կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, որը բխում էր «Հիմնադրամների մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների պահանջներից:

Առաջարկվեց՝

Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանի կողմից առաջարկվեց Ինստիտուտի ներքին իրավական ակտերում փոփոխություններ կատարելիս փոփոխության հետ մեկտեղ ներկայացնել փոփոխվող դրույթը(ները):

Օրակարգի առաջին հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան, հարակից զեկուցող Ինստիտուտի իրավախորհրդատու Օֆելյա Պետրոսյան)

Երկրորդ հարցի ներկայացման համար Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը խոսքը փոխանցեց Ինստիտուտի իրավախորհրդատու Օ. Պետրոսյանին:

Ինստիտուտի իրավախորհրդատու Օ. Պետրոսյանը ներկայացրեց Խորհրդի աշխատակարգում արված լրացումներն ու փոփոխությունները:

Առաջարկվեց՝

Խորհրդի անդամ Գևորգ Լոռեցյանը առաջարկեց, որ Աշխատակարգի 6.1.1 կետի «*Խորհրդի նիստերին առանց ձայնի իրավունքով մասնակցում է ինստիտուտի ռեկտորը: Նիստին կարող են ներկա լինել նաև համապատասխան անձինք, եթե օրակարգում քննարկվող հարցը պահանջում է մասնագիտական զեկուցում և պարզաբանումներ»* նախասադությունից առաջ լրացնել «***Խորհրդի նախագահի համաձայնությամբ»*** բառերը, ինչպես նաև Աշխատակարգի 3.12 կետում «*Ինստիտուտի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով»* բառերից հետո լրացնել «**info@sportedu.am**» բառերը:

Օրակարգի երկրորդ հարցը լրացումներով դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Օրակարգի երրորդ հարցով (զեկուցող Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան, հարակից զեկուցող Ինստիտուտի իրավախորհրդատու Օֆելյա Պետրոսյան)

Երրորդ հարցի ներկայացման համար Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը խոսքը փոխանցեց Ինստիտուտի իրավախորհրդատու Օ. Պետրոսյանին:

Ինստիտուտի իրավախորհրդատու Օ. Պետրոսյանը ներկայացրեց Խորհրդի աշխատակարգում արված լրացումներն ու փոփոխությունները:

Առաջարկվեց՝

Առաջարկվեց Կոնանակարգի 2.6 կետում *«առձեռն, փոստով կամ Ինստիտուտի պաշտոնական էլեկտրոնային փոստին»* բառերից հետո ավելացնել «**info@sportedu.am**» բառերը:

Օրակարգի երրորդ հարցը լրացումով դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Օրակարգի չորրորդ հարցով (այլ հարցեր)

Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը ներկայացրեց Շավարշ Քրիսեանի կիսանդրու Ինստիտուտի մուտքի ձախակողմյան հատվածում տեղադրելու և Խորհրդի թույլտվությունը ստանալու հարցը:

Օրակարգի չորրորդ հարցը լդրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Խորհրդի նախագահ ***Ռոման Մուրադյան***

Խորհրդի քարտուղար ***Դիանա Ալեքսանյան***